

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/6-5»**

ք. Երևան

ՕՏ «օգոստոսի» 2016թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ.Գրիգորյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Օ.Բաղդասարյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Հ-28, Ջրառատ-Մեղրածոր-Հանքավան կմ 1+127 հատվածի վթարային կամուրջի վերականգնման և Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Աղբբեջանի սահման կմ 43+300 հատվածի վթարված կամուրջի հիմնանորոգման շինարարական աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված 2016 թվականին իրականացվելիք Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.10.2016թ., իսկ ընդհանուր աշխատանքների մնացած մասը պետք է կատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 280 օրացուցային օրվա ընթացքում:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 (երեք) տարին: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի ժամկետ է սահմանվում 3 տարին:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 (քառասուն) օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 190 267 169 (մեկ հարյուր իննսուն միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար մեկ հարյուր վաթսուինը) ՀՀ դրամ, որից 31 711 195 (երեսունմեկ միլիոն յոթ հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր իննսուուհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 68 681 611 (վաթսուներեք միլիոն վեց հարյուր ութսունմեկ հազար վեց հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ՝ որից 11 446 935 (տասնմեկ միլիոն չորս հարյուր քառասունվեց հազար ինը հարյուր երեսուհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին 121 585 558 (մեկ հարյուր քսանմեկ միլիոն հինգ հարյուր ութսուհինգ հազար հինգ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ՝ որից 20 264 260 (քսան միլիոն երկու հարյուր վաթսուչորս հազար երկու հարյուր վաթսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.1.1 Սույն պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ 190 267 169 (մեկ հարյուր իննսուն միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար մեկ հարյուր վաթսուինը) ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Աշխատանքի մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: 2016 թվականին կատարված աշխատանքների մասով դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, իսկ ընդհանուր աշխատանքների մնացած մասի կատարման մասով դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով, կամ կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է¹.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

¹ Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ, ապա ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապարասխան չափաբաժնի գինն է:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն 2016 թվականին իրականացվելիք աշխատանքների մասով ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, իսկ ընդհանուր աշխատանքների մնացած մասի կատարման մասով՝ ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը կլուծարվի, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի ընդհանուր աշխատանքների մնացած մասի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվի:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.9 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, կազմված է 25 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.10 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Արանսպորտի և կապի նախարարություն»
Ք. Երևան, Մայրենյան 28
Կենտրոնական գանձանկետարան
ՀՊՈՈՍԻՆՈՒՄՆԵՐ
900011005783
900011005775
ՀՀ 02565518
(ստորագրություն)
Կ. Տոնդուկյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ
«Կոնալթ» ՍՊԸ, Ք. Հրազդան,
Շահումյան 342
«ԱՇԻԲ» ՓԲԸ, Հրազդան մասնաճյուղ
Հ/Հ 2476400040620999
ՀՎՀՀ 03000978
(ստորագրություն)
Կ.Տ.

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան, կմ1+127 հատվածի վթարային կամուրջի վերականգնման
 աշխատանքներ (Ընդանուրը)

ՀՀ դրամ

ը/կ	Աշխատանքների և ծախսերի անվանում	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
1.Նախապատրաստական աշխատանքներ					
1	Ժամանակավոր ճանապարհային նշանների տեղադրում	հատ	15	27083	406245
2	Կամրջի հենարանների վրայով անցնող հոսանքի ջրահապատ մալուխի տեղափոխում	մ	56	1486	83216
3	Նույնը կապի մալուխների	մ	165	542	89430
4	Կամրջի անմիջական հարևանությամբ գտնվող 10հազ. կվտ լարումով էլեկտրասայան ջարդված ե/բ կցորդի փոխարինում տեղափոխում	հատ	1	338822	338822
1.Ընդամենը					917713
2.Միջանկյալ հենարանների հիմքերի ողողումից պաշտպանման աշխատանքներ					
1	Երրորդ հենարանի հիմքի շուրջ խրամուղու փորում 6 ⁹ -IVկ. խոնավ գրունտներում էքսկավատորով, գրունտը կուտակելով խրամուղու եզրին	մ ³	160	962	153920
2	Նույնը ձեռքով	մ ³	17	6475	110075
3	Խրամուղու հատակի հարթեցում ձեռքով	մ ²	106	440	46640
4	Երկրորդ հենարանի հիմքի շուրջ խրամուղու փորում 6 ⁹ -IVկ. խոնավ գրունտներում էքսկավատորով, գրունտը կուտակելով խրամուղու եզրին	մ ³	153	962	147186
5	Նույնը ձեռքով	մ ³	14	6475	90650
6	Գաբիոնի արկղերի 1*1*0.5 մ չափերի պատրաստում , տեղադրում և ամրացում	մ ³	84	22728	1909152
7	Հենարանների հիմքի և գաբիոնների արանքում 10-30սմ տրամագծի քարերի լցում	մ ³	12.3	12206	150134
8	Խրամուղիների հետլիցք բուլդոզերով , տեղափոխելով 10մ.	մ ³	190	112	21280
9	Ավելացած գրունտի տեղափոխում բուլդոզերով մինչև 50մ հարթակի կառուցման համար.	մ ³	154	932	143528
2.Ընդամենը					2772565
3.Գետի ժամանակավոր հունի, հողային պատնեշի և շինարարական հարթակի կառուցում					
1	Թաց 6 ⁹ -IVկ. գրունտի մշակում գետի ողողահունում բուլդոզերով ժամանակավոր հունի կառուցման համար, տեղափոխելով մինչև 50մ դեպի հողային պատնեշ	մ ³	180	932	167760

2	Թաց 10 ⁵ -IVկ. գրունտի մշակում գետի ողողահունում բուլդոզերով ժամանակավոր հունի կառուցման համար տեղափոխելով մինչև 50մ դեպի հողային պատնեշ	մ ³	240	932	223680
3	Թաց 6 ⁹ -IVկ. գրունտի մշակում գետի ողողահունում էքսկավատորով , բարձելով ի/թ վրա, տեղափոխում մինչև 5 կմ շինարարական հարթակ կառուցելու համար	մ ³	420	6536	2745120
4	Ջրահագեցված 6 ⁹ -IVկ. գրունտի մշակում գետի հունում բուլդոզերով ժամանակավոր հունի կառուցման համար տեղափոխելով մինչև 50մ հողային պատնեշ կառուցելու համար	մ ³	140	932	130480
5	Հողային պատնեշի պրոֆիլի ձևավորում բուլդոզերով	մ ³	550	347	190850
6	Հողային պատնեշի պրոֆիլի ձևավորում ձեռքով	մ ³	10	6475	64750
7	Հողային պատնեշի պրոֆիլի ձևավորում բուլդոզերով յուղային կավից	մ ³	65	3735	242775
8	Հողային պատնեշի պրոֆիլի ձևավորում յուղային կավից ձեռքով	մ ³	5	9855	49275
9	Գրունտների խտացում պնևմոզոլոնով 3 անցումով	մ ³	70	323	22610
10	Հողային պատնեշի պրոֆիլի ձևավորում d≥25սմ բարերից	մ ³	33	9708	320364
11	10 ⁵ -IVկ. գրունտի մշակում գետի հեղեղահունում էքսկավատորով , բարձելով ի/թ վրա, տեղափոխում մինչև 5 կմ շինարարական հարթակի լիցքի համար	մ ³	206	6536	1346416
12	6 ⁹ -IVկ. գրունտի մշակում գետի հեղեղահունում բուլդոզերով տեղափոխելով մինչև 50մ շինհարթակ կառուցելու համար	մ ³	450	932	419400
13	Շինարարական հարթակի կառուցման համար գրունտային զանգվածի փռում շերտերով բուլդոզերով տեղափոխելով մինչև 50մ և հարթեցնելով	մ ³	1230	932	1146360
14	Գրունտների ջրում, խտացում պնևմոզոլոններով 3 անցումով	մ ³	1230	452	555960
3.Ընդամենը					7625800

4.Քանդման աշխատանքներ

1	Կամուրջի երթևեկելի մասի և կցորդման հատվածների գոյություն ունեցող ա/բ ծածկի քանդում h=6սմ, բարձում էքսկավատորով ի/թ վրա , տեղափոխում մինչև 5 կմ թափոնակույտ	մ ³	48	14039	673872
2	Կամուրջի երթևեկելի մասի ծածկի շերտերի քանդում h=16սմ, բարձում էքսկավատորով ի/թ վրա , տեղափոխում մինչև 5 կմ թափոնակույտ	մ ³	63.5	10609	673689
3	Կամուրջի վրա գոյություն ունեցող հավաքովի ե/բ մայթի բլոկների ապամոնտաժում, բարձում ավտոտրանսպորտի վրա, տեղափոխում մինչև 5 կմ և բեռնաթափում թափոնակույտում	մ ³	16.9	44105	745375
4	Գոյություն ունեցող ոչ պիտանի մետաղական բազրիքների ապամոնտաժում, բարձում ավտոտրանսպորտի վրա, տեղափոխում թափոնակույտ մինչև 5 կմ	գծմ	92	1130	103960
5	Ղեֆորմացիոն կարերի ապամոնտաժում բարձում ավտոտրանսպորտի վրա, տեղափոխում թափոնակույտ մինչև 5 կմ	գծմ	60.8	4746	288557

6	D=500մմ տրամագծով չգործող պողպատյա ջրատար խողովակի ապամոնտաժում, բարձուն ավտոտրանսպորտի վրա, տեղափոխում մինչև 1 կմ և բեռնաթափում, պահեստավորելու համար	գծմ	56.39	6111	344599
7	D=300մմ տրամագծով չգործող պողպատյա ջրատար խողովակի ապամոնտաժում, բարձուն ավտոտրանսպորտի վրա, տեղափոխում մինչև 1 կմ և բեռնաթափում, պահեստավորելու համար	գծմ	56	303	16968
8	Թիվ 1 և 4 ափային հենարանների պահարանային տուփերի և հակադարձ թևերի խարխլված բետոնի քանդում, բարձուն ավտոտրանսպորտի վրա, տեղափոխում թափոնակույտ մինչև 5 կմ	մ ³	16.4	21544	353322
9	Թիվ 1,3 և 4 հենարանների երիզների խարխլված բետոնի քանդում, բարձուն ավտոտրանսպորտի վրա, տեղափոխում թափոնակույտ մինչև 5 կմ	մ ³	0.7	21544	15081
10	Թիվ 2 միջանկյալ հենարանի իրանի մոնոլիտ բետոնյա հատվածների քանդում, բարձուն ավտոտրանսպորտի վրա, տեղափոխում թափոնակույտ մինչև 5 կմ	մ ³	6.8	21544	146499
11	Միջանկյալ հենարանների ֆերմատակերի վրայից կուտակված հողի , թափոնների և բուսականության հավաքում և բարձուն ձեռքով ի/թ վրա, տեղափոխում 5 կմ թափոնակույտ	մ ³	0.4	4120	1648

4.Ընդամենը 3363569

5.Ապամոնտաժման աշխատանքներ

1	16.76մ երկարությամբ ե/բ դիաֆրագմավոր թռիչքային հեծանների ապամոնտաժում և տեղափոխում մինչև 5մ ժամանակավոր պահեստավորման համար	հատ	12	152506	1830072
2	Տանգենցիալ տիպի հենարային մասերի ստորին բալանսիրների հանում, յուղում և պահեստավորում	հատ	12	26024	312288

5.Ընդամենը 2142360

6.Չողային աշխատանքներ

1	Մոտեցման լիցքի 6 ⁹ -IVկ. գրունտի մշակում ձեռքով եզրային հենարանների պահարային պատերի վերականգնման համար	մ ³	1.5	6482	9723
2	Եզրային հենարանների մոտ հետլիցք և լծորդումների լիցքի լրացում 6 ⁹ -IVկ. ցամակուղղահողով	մ ³	8.5	2210	18785
3	Կամուրջի և մոտեցման ճանապարհի հետ կցորդման հատվածում լիցքի շեփերի կարգավորում և հարթեցում ձեռքով	մ ²	60	440	26400

6.Ընդամենը 54908

7.Կամուրջի հունի մաքրում գետի հիմնական հոսանքը թողնելով միջին հենարանի միջնամասից կարգավորելով նաև գետի հեղեղահունը

1	6 ⁹ -IVկ. գրունտի մշակում բուլդոզերով տեղափոխելով մինչև 50մ	մ ³	280	932	260960
2	Նույնը թաց գրունտի	մ ³	220	932	205040
3	Նույնը ջրահագեցած գրունտի	մ ³	130	932	121160

7.Ընդամենը 587160

8.Կամուրջի երթևեկի մասի վերանորոգման աշխատանքներ

1	Երթևեկի մասի և մայթերի տակ միաձուլլ ջրաանթափանց /հիդրոֆոբ/ երկաթբետոնի իրականացում	մ ³	37.56	179908	6757344
---	--	----------------	-------	--------	---------

	B-30 դասի ,W6(Ամրան \varnothing 5Bp-I - 1,502տն)				
2	Հավաքովի ե/բ մայթի բլոկների մոնտաժում T-1-0.75 (34 հատ)	մ ³	27.18	551924	15001294
3	Մետաղական բազրիքների տեղադրում, ներկում (113,3մ)	տն	2.485	660315	1640883
4	Ջերմամեխանիկ կոնստրուկցիայով բոլոր թվով 4հատ դեֆորմացիոն կարանների ռուբերոիդային շերտերի փռում	մ ²	300.0	6263	1878900
5	Դեֆորմացիոն կարաններում 50*100մմ հատվածքի չափերով ձյութապատ տախտակի տեղադրում	մ ³	0.3	262576	78773
6	Դեֆորմացիոն կարանների վրա հիդրոֆոր բետոնի մեջ լրացուցիչ ամրանային ցանցի տեղադրում(Ամրան A-III-0,54տն, Bp-I-0,136տն)	տն	0.676	600923	406224
7	Եզրային հենարանների և թռիչքային կառույցի դեֆորմացիոն կարանների հարող մակերեսների անհարթությունների հարթեցում պոլիմեր ցեմենտային կազմի շաղախով h=3սմ	մ ²	12	1936	23232
8	Մայթի ե/բ հավաքովի բլոկների և մոնոլիտ ջրանթափանց բետոնյա շերտի միջև կարանի մշակում բիտումային մածուկով	մ ²	1.5	1319	1979
9	Մայթի ե/բ հավաքովի բլոկների միջև կարերի մշակում բիտումային մածուկով	մ ²	0.54	1319	712
8.Ընդամենը					25789341

9.Թիվ 2 միջանկյալ հենարանի վերակառուցում

1	Միածույլ ե/բ հիմքերի կառուցում B-25 դասի ծանր հիդրոտեխնիկական բետոնից	մ ³	38	143555	5455090
2	Ամրանային ցանցեր A-III	տն	0.741	487051	360905
3	Առանձին ձողեր A-III	տն	0.0429	487051	20894
4	Միածույլ ե/բ շապիկի, ֆերմատակի և հենման բարձիկների կառուցում B-25 դասի ծանր հիդրոտեխնիկական բետոնից	մ ³	33.4	143555	4794737
5	Ամրանային խարիսխների տեղադրման համար գոյություն ունեցող հենարանի իրանում d=30մմ տրամագծով և 350մմ խորությամբ անցքերի շաղախում	հատ	200.0	590	118000
6	Պոլիմերցեմենտյա շաղախով ամրանային խարիսխների տեղադրում նախորդ շաղախած անցքերում	տն	0.124	1076495	133485
7	Մետաղական էլեմենտների տեղադրում	տն	1.77	515990	913302
8	Բետոնյա հիմքերի և հենարանի իրանի ստորգետնյա հատվածի քսուկային ջրամեկուսացում	մ ²	95	1365	129675
9	Ջրամեկուսիչ պաշտպանիչ շերտ 2շերտ	մ ²	100.0	5919	591900
10	Տանգենցիալ տիպի /պահեստավորված/ հենարային մասերի ստորին բալանսիրների տեղադրում	հատ	12	32533	390396
11	Ֆերմատակի վրա ցեմ. ավազային շաղախի տեղադրում թեթության համար	մ ³	1.85	55051	101844
9.Ընդամենը					13010229

10.Ափային հենարաններ

1	Գոյություն ունեցող թիվ 1 ափային հենարանի պահարանային տուփի բետոնացում B-25 դասի բետոն	մ ³	12.3	107667	1324304
2	Գոյություն ունեցող թիվ 1 և 4 ափային հենարանների իրանում d=30մմ տրամագծով և 250մմ խորությամբ անցքերի	հատ	146	590	86140

	շաղափում				
3	Պոլիմերցեմենտյա շաղախով ամրանային խարիսխների տեղադրում նախորոք շաղափած անցքերում	տն	0.082	1076495	88273
4	Մետաղական էլեմենտների տեղադրում	տն	0.565	515990	291534
5	Ներդիր էլեմենտներ մայթերի սալերի ամրացման համար	տն	0.044	494390	21753
10.Ընդամենը					1812004

11.Թռիչքային կառուցվածք

1	Թռիչքային կառուցվածքի հեծանների արտաքին մակերեսների մաքրում պողպատյա խոզանակով , ջրով և չոր օդով ճնշումի տակ	մ ²	25	2215	55375
2	Թռիչքային կառուցվածքի հեծանների պաշտպանիչ շերտի վերականգնում պոլիմերցեմենտային շաղախով h=3սմ	մ ²	25	2045	51125
3	D=16մմ տրամագծով և 90մմ խորությամբ անցքերի շաղափում ե/բ հեծանների սալերում	հատ	80.00	580	46400
4	Ներդիր էլեմենտների տեղադրում	տն	0.136	493179	67072
5	Դիաֆրագմաների ջարդոցված տեղամասերի վերականգնում պոլիմերցեմենտային շաղախով h=3սմ	մ ²	32	2045	65440
6	Երրորդ չապանոնտաժվող թռիչքային կառույցում 25տն բեռնաբարձության ամբարձիչով 16.76մ երկարությամբ ե/բ դիաֆրագմավոր թռիչքային հեծանները բարձրացնել և վերատեղադրել նախագծային դիրքում	հատ	3	190620	571860
7	Պահեստավորված հեծանների լայնական տեղափոխում դեպի ամբարձիչի անվտանգ գործունեության տիրույթ և տեղադրում	հատ	12	190620	2287440
8	Մոնտաժված հեծանների դիաֆրագմաների միացում միմյանց (շերտապողպատ 0,107տ, անկյունակ 0,283տ, ամբան A-1 0,073)	տեղ	150	1593	238950
9	Դիաֆրագմաների միացումների ներդիր էլեմենտների ամրանների անցման տեղերի մշակում պոլիմերցեմենտային կազմի շաղախով	մ ³	1.2	55070	66084
10	Չեմարանների ֆերմատակերի հորիզոնական մակերեսների , թիվ 3 և 4 հեմարանների իրանների մակերեսների մաքրում պողպատյա խոզանակով , ջրով և չոր օդով ճնշումի տակ	մ ²	45.1	2215	99897
11	Չեմարանների ֆերմատակերի հորիզոնական մակերեսների , թիվ 3 և 4 հեմարանների իրանների մակերեսների, թիվ 1,3 և 4 հեմարանների քանդված երիզների վերականգնում պոլիմերցեմենտային շաղախով h=3սմ	մ ²	59.1	2045	120860
12	D=20մմ տրամագծով և 150մմ խորությամբ անցքերի շաղափում հեմարանների բետոնյա իրաններում	հատ	280.00	590	165200
13	Պոլիմերցեմենտյա շաղախով ամրանային խարիսխների տեղադրում նախորոք շաղափած անցքերում	տն	0.106	1076495	114108
11.Ընդամենը					3949811

12.Այլ աշխատանքներ

1	Մայթի բլոկների անվահրիչի գլխամասերի ու երթևեկելի մասի կողմից ուղղաձիգ սպիտակ-սև ներկում 2անգամ	մ ²	82	1124	92168
---	--	----------------	----	------	-------

2	Մայթի բլոկների անվահորիչի հետևի մասի ներկում սպիտակ ներկով շանգամ	մ ²	64.3	1124	72273
3	Եզրային հենարանների և մոտեցման ճանապարհի կցորդման հատվածներում նոր ծածկի ա/բ ստորին խ/հ շերտի իրականացում h=6սմ	մ ²	91	7426	675766
4	Եզրային հենարանների և մոտեցման ճանապարհի կցորդման հատվածներում նոր ծածկի վերին շերտի իրականացում մ/հ ա/բ h=5սմ	մ ²	441	6055	2670255
5	Վամուրջի երթևեկելի մասի ստորին շերտի իրականացում խ/հ ա/բ h=4սմ	մ ²	398	4847	1929106
6	Վամուրջի երթևեկելի մասի վերին շերտի իրականացում մ/հ ա/բ h=4սմ	մ ²	398	4916	1956568
8	Ճանապարհի առանցքի և կողերի նշագծում հոծ գծով 10սմ լայնությամբ 1.1	կմ	0.107	121673	13019
12.Ընդամենը					7409155
Ընդհանուրը					69434616

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ-4, Երևան - Սևան - Իջևան - Աղբբեջանի սահման, կմ43+300 հատվածի վթարված կամրջի հիմնանորոգման աշխատանքներ (Ընդհանուր)

«Ղրամ»

№	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
1. Նախապատրաստական աշխատանքներ					
1	Ժամանակավոր ճանապարհային նշանների տեղադրում	հատ	12	26727	320,724
2	Գաբարիտային դարպասների համար հենարանների հիմքերի փոստրակների փորում 6գ-IV կարգի գրունտներում ձեռքով	մ ³	32.2	6349	204,438
3	Ավազակոպճային նախապատրաստական շերտի պատրաստում h=10սմ	մ ³	0.9	1795	1,616
4	Հիմքերի միաձույլ բետոն	մ ³	9.82	78600	771,852
5	Պողպատե տարրերից գաբարիտային դարպասների տարրերի պատրաստում և տեղադրում	տն	1.302	934905	1,217,246
6	Սահմանափակող ազդանշանային շերտաձողի պատրաստում և տեղադրում	մ ³	0.28	328992	92,118
7	Գաբարիտային դարպասների բոլոր տարրերի ներկում	մ ²	57.5	835	48,013
8	Փոստրակների հետլիցք 6գ-IV կարգի գրունտներով ձեռքով, տոփանումով	մ ³	21.5	1969	42,334
9	ճանապարհային նշանների տեղադրում (3.13)	հատ	2	32000	64,000
1. Ընդամենը					2,762,339
2. Քանդման աշխատանքներ					
1	Ուղեանցի երթևեկելի մասի և կցորդման հատվածների գոյություն ունեցող ա/բ ծածկի քանդում h _{մոթ.} =12սմ, բարձում էքսկավատորով ի/թ վրա, տեղափոխում մինչև 5 կմ թափոնակույտ	մ ³	98.4	12746	1,254,206

2	Ուղեանցի երթևեկելի մասի ծածկի շերտերի քանդում, h=8սմ բարձրում էքսկավատորով ի/թ վրա, տեղափոխում մինչև 5 կմ թափոնակույտ	մ ³	42.64	9857	420,302
3	Ուղեանցի երթևեկելի մասի հոսքային եռանկյան և ջրիոս եռանկյան քանդում, բարձրում էքսկավատորով ի/թ վրա, տեղափոխում մինչև 5 կմ թափոնակույտ	մ ³	90	10401	936,090
4	Բաժանիչ գոտու բազալտե եզրաքարերի քանդում, բարձրում էքսկավատորով ի/թ վրա, տեղափոխում մինչև 5 կմ թափոնակույտ	մ	90	1731	155,790
5	Ուղեանցի և անցումային տեղամասի բաժանիչ գոտու բուսանողի հավաքում և բարձրում ի/թ վրա, տեղափոխում 5 կմ (պահեստավորում)	մ ³	21	3985	83,685
6	Միջանկյալ հենարանների պարզունակների վրայից 10սմ հաստությամբ միաձույլ բետոնյա տեղամասի քանդում, բարձրում էքսկավատորով ի/թ վրա, տեղափոխում մինչև 5 կմ թափոնակույտ	մ ³	1.4	10389	14,545
7	Անվահրիչների ապամոնտաժման և պահեստավորման աշխատանքներ	հատ	25	6192	154,800
8	Միջանկյալ և ափային հենարանների պարզունակների վրայից քանդված բետոնի կտորների, գրունտի և շինաղբի մնացորդների հավաքում ձեռքով և բարձրում ի/թ վրա, տեղափոխում մինչև 5 կմ թափոնակույտ	մ ³	7.5	4675	35,063
9	Միջինծանային քայքայված 36սմ լայնությամբ միաձույլ բետոնյա սալերի քանդում, բարձրում էքսկավատորով ի/թ վրա, տեղափոխում մինչև 5 կմ թափոնակույտ	մ ³	20.8	38544	801,715
10	Միջանկյալ հենարանների պարզունակների միացման խարխված բետոնյա տեղամասերի քանդում, բարձրում էքսկավատորով ի/թ վրա, տեղափոխում մինչև 5 կմ թափոնակույտ	մ ³	0.7	10456	7,319.2
11	Ուղեանցի վրա գոյություն ունեցող հավաքովի ե/բ մայթի բլոկների ապամոնտաժում, բարձրում ավտոտրանսպորտի վրա, տեղափոխում մինչև 5 կմ և բեռնաթափում թափոնակույտում	մ ³	9.74	43306	421,800
12	Դեֆորմացիոն կարերի ապամոնտաժում	գծմ	99	4653	460,647
13	Ուղեանցի լծարդման հատվածներից գոյություն ունեցող հավաքովի ե/բ անցումային սալերի ապամոնտաժում	մ ³	51.43	20352	1,046,703.36
14	Ապամոնտաժված անցումային սալերի բարձրում ավտոտրանսպորտի վրա, տեղափոխում մինչև 5 կմ թափոնակույտ	տն	76.8	9778	750,950
15	Ուղեանցի անցումային սալերի տակի տապաստների հատվածների ապամոնտաժում բարձրում, ավտոտրանսպորտի վրա, տեղափոխում մինչև 5 կմ և բեռնաթափում թափոնակույտում	մ ³	13.176	43284	570,309.98
16	Մետաղական արգելափակոցների ապատեղակայում	մ	62	3013	186,806.00
17	Ապամոնտաժված ոչ պիտանի մետաղական արգելափակոցների և դեֆորմացիոն կարերի բարձրում ավտոտրանսպորտի վրա, տեղափոխում մինչև 5 կմ թափոնակույտ	տն	1.8	15173	27,311
18	11.36մ երկարությամբ ե/բ թրիչքային եզրային հեծանի ապամոնտաժում, բարձրում	հատ	1	218012	218,012

	ավտոտրանսպորտի վրա, տեղափոխում մինչև 5 կմ և բեռնաթափում թափոնակույտում				
				2. Ընդամենը	7,546,056
3. Ապամոնտաժման աշխատանքներ					
1	8.66մ երկարությամբ ե/բ տավրածն եզրային հեծանների ապամոնտաժման աշխատանքներ	հատ	4	59186	236,744
2	8.66մ երկարությամբ ե/բ տավրածն միջանկյալ հեծանների ապամոնտաժման աշխատանքներ	հատ	26	59186	1,538,836
3	Թոփքային կառույցի 11.36մ երկարությամբ ե/բ եզրային հեծանի ապամոնտաժման աշխատանքներ	հատ	1	104679	104,679
4	Թոփքային կառույցի 11.36մ երկարությամբ ե/բ միջանկյալ հեծանի ապամոնտաժման աշխատանքներ	հատ	13	104679	1,360,827
				3. Ընդամենը	3,241,086
4. Թիվ 2 միջանկյալ հենարանի եզրային քայքայված կանգնակի ուժեղացում					
1	Գրունտի մշակում ձեռքով կանգնակի հիմքի մոտ	մ ³	1.8	6375	11,475
2	Եզրային հրենարանի շեյքը պահող բետոնյա հենապատի տեղամասի քանդում	մ ³	0.9	53690	48,321
3	Նույնի վերականգնում B-20 դասի բետոնով	մ ³	0.9	95529	85,976
4	Գրունտի հետլիցք ձեռքով	մ ³	1.8	2155	3,879
5	Կանգնակի ուժեղացման բետոն	մ ³	0.3	95350	28,605
6	Մետաղական շինվածքի տեղադրում	տն	0.199	534369	106,339
7	Ռաբիտցի ցանց	մ ²	9.1	1083	9,855
8	Ցեմենտաավազային սվաղ h=4սմ	մ ²	8.2	2010	16,482
				4. Ընդամենը	310,933
5. Միջանկյալ հենարանների պարզունակների միացումների բետոնացում					
1	Ամրանների ուղղում և եռակցում միմյանց	տեղ	48	1175	56,400
2	Լրացուցիչ ամրանի տեղադրում A-III	տն	0.011	528905	5,818
3	Բետոնացում B-25 դասի բետոն	մ ³	0.73	105600	77,088
				5. Ընդամենը	139,306
6. Եզրային հենարանների պարզունակների և պահարանային տուփերի միացումների բետոնացում					
1	Բետոնացում B-25 դասի բետոնով	մ ³	1.2	105585	126,702
2	Լրացուցիչ ամրանի տեղադրում (ամրան A-III և անկյունակ)	տն	0.2625	534390	140,277
				6. Ընդամենը	266,979
7. Հենարաններ հենման բարձիկների և հենակների պատրաստում					
1	Հենարանների ե/բ պարզունակների մեջ d=30մմ տրամագծով, 250մմ խորությամբ անցքերի շաղափում և ամրանային խարիսխների տեղադրում պոլիմերշաղախի օգտագործմամբ	հատ	652	1550	1,010,600
2	Մետաղական ցանցերի տեղադրում	տն	0.341	506157	172,600
3	Բետոնացում B-25 դասի բետոնով	մ ³	6.42	105550	677,631
4	Ցեմենտաավազե շաղախից թեքությունների պատրաստում պարզունակների վրա	մ ³	2.3	53978	124,149

7. Ընդամենը					1,984,980
8. Հենարաններ և նրանց արտաքին մակերեսների վերանորոգում					
1	Հենարանների կանգնակների և պարզունակների մակերեսների մաքրում պողպատյա խոզանակով և չոր օդով ճնշման տակ քայքայված շերտի հեռացում	մ ²	86.4	2173	187,747
2	Հենարանների կանգնակների և պարզունակների ոչ մեծ մակերեսների վերականգնում պոլիմերցեմենտային շաղախով	մ ²	86.4	2003	173,059
3	Պահարանային պատերի քայքայված հատվածների քանդում, բարձում ա/ի և տեղափոխում թափոնակույտ	մ ³	0.8	53735	42,988
